*Հավելված N 3*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

<<Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն >> ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Սննդամթերքի

ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-Է ԱՃԱՊՁԲ-18/1-Ե-4 ծածկագրով գնման
ընթացակարգի ծածկագիրը
ընթացակարգի արդյունքում

2019 թվականի հունվար 15-ին կնքված N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-Է ԱՃԱՊՁԲ-18/1-Ե-4
պայմանագրի կնքման տարեթիվը և ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրում 2019 թվականի փետրվարի 4-ին կատարված
փոփոխությունը կատարելու մասին երկկողմ հաստատված փաստաթղթի տարեթիվը և ամսաթիվը

փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ- Երկկողմ համաձայնությամբ պայմանագրով նախատեսված ապրանքների քանակների նվազեցում
առաջացած պատճառի մանրամասն բովանդակությունը

Փոփոխության նկարագրություն- Փոփոխվել է պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցը:
կատարված փոփոխության մանրամասն բովանդակությունը

Փոփոխության հիմնավորում- Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետ, 15.01.2019 կնքված N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-Է ԱՃԱՊՁԲ-18/1-Ե-4 պայմանագրի 8.5 և 8.15 կետ
փոփոխության կատարման հիմնավորման մանրամասն բովանդակությունը

Փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 05.04.2017թ 526-Ն որոշման 56 կերով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին

Պատվիրատու՝ <<Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն >> ՊՈԱԿ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## << ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ >>ՊՈԱԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ՝
**« 15 » հունվար 2019 ԹՎԱԿԱՆԻ**
## N *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1- Ե-4 »*
## ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ք. Երևան**

**«04» «02» 2019թ.**

« Մարի Իզմիրյանի անվան մանկատուն » պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Ա. Պետրոսյանի , որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և « ՖՈՏՈՆ » ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի XV-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով «15» հունվար 2019թ.N*«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/-1-Ե-4* » պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված սննդամթերքի մատակարարման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

### *1. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</u>*

1.1 Սահմանել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է « Մարի Իզմիրյանի անվան մանկատուն » ՊՈԱԿ-ին:

1.2 Պայմանագրի 3.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պայմանագրի գինը կազմում է 110974 ( Մեկ հարյուր տաս հազար ինը հարյուր յոթանասունչորս ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:»:

1.3 Պայմանագրի Հավելված 1-ի անբաժան մաս կազմող գնման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:

1.4 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 2-ի:

### *2. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ</u>*

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

### *3. <u>ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</u>*

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածները կազմված են ____ էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**Գ Ն Ո Ր Դ**

«Մարի Իզմիրյանի անվան մանկատուն » ՊՈԱԿ
հասցեն՝ ք. Երևան, Վարշավյան փ. Մ. Յաղուբյան13 նրբ
Բանկի անվանումը՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900018001553
ՀՎՀՀ `00841035

տնօրեն՝ ............................ Ա. Պետրոսյան
Կ .Տ. (ստորագրություն)

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

« ՖՈՏՈՆ » ՍՊԸ
ք. Երևան, Ռոստոմի 58
« ՎՏԲ Հայաստան բանկ » ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ՝ 90036001

տնօրեն՝ ............................ Ն. Պետրոսյն
ԿՏ (ստորագրություն)

Հավելված 1

<<   15   >><< հունվար >>201--թ. կնքված

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1-Ե-4 » ծածկագրով պայմանագրի

Համաձայնագիր  1-ի

## ԳՆՄան  ժամանակացույց

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 108 | 15871100 /510 | Քացախ | ՀՀ | Քացախ խնձորի, պատրաստված թարմ խնձորից, թուլատրվող թթուների զանգվածային մասը՝ 4,0 %, մնացորդային սպիրտի ծավալը 0,3 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %: | լիտր | 396 | 2772 | 7 | ք. Երևան,Վարշավյան փ. Մ. Յաղուբյան նրբ 13 | | Պատվիրատուի հայտի հիման վրա՝ մինչև 30.12.2019թ. |
| 111 | 15331180 /509 | Պահածոյացված ոլոռ | ՀՀ | Ոլոռ պահածոյացված, բաղադրությունը՝ ոլոռ, ջուր, շաքար, աղ, ապակյա կամ մետաղյա տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %: | կգ | 575 | 73600 | 128 | ք. Երևան,Վարշավյան փ. Մ. Յաղուբյան նրբ 13 | | Պատվիրատուի հայտի հիման վրա՝ մինչև 30.12.2019թ. |
| 113 | 15331152 /509 | Սիսեռ | ՌԴ | Սիսեռ, կլոր, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Չորացրած, կեղևած, դեղին գույնի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 60%: | կգ | 474 | 34602 | 73 | ք. Երևան,Վարշավյան փ. Մ. Յաղուբյան նրբ 13 | | Պատվիրատուի հայտի հիման վրա՝ մինչև 30.12.2019թ. |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | 110974 | | | | |

** Գնման ժամանակացույցով սահմանված  են առավելագույն քանակները: Դրանք կարող են փոփոխվել՝ պայմանավորված  շահառուների քանակի փոփոխությամբ

ԳՆՈՐԴ

Կ.Տ( ստորագրություն )

Վաճառող

.....................................................

Կ.Տ( ստորագրություն )

Հավել
<< 15 >><< հունվար >>201--թ. կնքվա
«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1-Ե-4 » ծածկագրով պայմանագրի
Համաձայնագիր 1-ի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 108 | 15871100 /510 | Քացախ | | | 792 | 792 | 1584 | 1584 | 1584 | 1584 | 1584 | 2772 | 2772 | 2772 | 2772 |
| 111 | 15331180 /509 | Պահածոյացված ոլոռ | | | 8625 | 17250 | 23000 | 31625 | 37375 | 46000 | 54625 | 60375 | 66125 | 73600 | 73600 |
| 113 | 15331152 /509 | Սիսեռ | | | 4740 | 7110 | 9480 | 14220 | 16590 | 18960 | 21330 | 26070 | 30810 | 34602 | 34602 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | | | | 110974 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

.....................................................
Կ.Տ( ստորագրություն )

ՎԱՃԱՌՈՂ

.....................................................
Կ.Տ( ստորագրություն )